Հաստատված է՝
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
գիտխորհրդի 2014թ. հոկտեմբերի 23-ի նիստում
Արձանագրություն № 01-10/14
Գիտական խորհրդի նախագահ՝

Գ.Շ. Գալստյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) ֆակուլտետի (այսուհետ՝ ֆակուլտետ) կանոնադրությունը մշակված է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», Հայաստանի Հանրապետության օրենքների, Համալսարանի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:
2. Սույն կանոնակարգով սահմանվում են ֆակուլտետի կառուցվածքը, գիտական խորհրդի և դեկանատի խորհրդի կազմերի ձևավորման ու գործունեության կարգերը, իրավասությունները, գործառույթները, հիմնական խնդիրները, կառավարումը, ֆակուլտետի դեկանի իրավունքներն ու պարտականությունները:
3. Ֆակուլտետն ունի խորհրդանշանի պատկերով կլոր կնիք և հայերեն, ռուսերեն, անգլերեն անվանումներով ձևաթուղթ:
4. Ֆակուլտետը գործում է սույն կանոնադրության հիման վրա, իր գործունեությունն իրականացնում է երկաստիճան (բակալավրի և մագիստրոսի) բարձրագույն մասնագիտական կրթության մակարդակներում՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքներին, Համալսարանի կանոնադրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

II. Ֆակուլտետի կառուցվածքը

5. Ֆակուլտետի կառուցվածքը սահմանվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ և հաստատվում Համալսարանի ռեկտորի հրամանով:
6. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից, ուսումնական և գիտական, որակի ներքին ապահովման ու այլ օժանդակ օղակներից:
7. Ֆակուլտետի գործունեությունը կանոնակարգվում է Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով:
8. Ամբիոնների գործունեությունը կանոնակարգվում է Համալսարանի և ամբիոնի կանոնադրությամբ:

III. Համալսարանի ֆակուլտետը

9. Համալսարանի ֆակուլտետն ինքնուրույն ուսումնական կառուցվածքային ստորաբաժանում է, իրականացնում է ուսումնական, մանկավարժական, մեթոդական, գիտական, ուսումնաօժանդակ և ինժեներատեխնիկական գործունեությունը՝ ըստ սահմանված չափորոշիչների:
10. Ֆակուլտետի գործունեությունն իրականացվում է ֆակուլտետի գիտական խորհրդի, դեկանատի խորհրդի, դեկանի, ամբիոնների, այլ օժանդակ օղակների գործառույթների իրականացմամբ:
11. Ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում է Բոլոնյան սկզբունքներին համապատասխանեցման մոտեցումներով՝ բակալավրիատի քառամյա և մագիստրատուրայի երկամյա կրթական ծրագրերով՝ շրջանավարտներին շնորհելով բարձրագույն մասնագիտական կրթությամբ բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններ:
12. Հետբուհական կրթությունն իրականացվում է ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում:

13. Համալսարանի ֆակուլտետը՝

1) ըստ սահմանված չափանիշների, մշակում է իր գործունեության ծրագիրը և ներկայացնում է համալսարանի ռեկտորին համալսարանի գիտական խորհրդում հաստատելու համար:

2) ապահովում է բարձր որակավորում ունեցող բարձրագույն կրթությամբ մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը.

3) կազմակերպում է ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական և դաստիարակչական աշխատանքների պլանավորումն ու կազմակերպումը.

4) ապահովում է կրթության և գիտության ինտեգրացման հիման վրա ուսուցման բովանդակության կատարելագործումը.

5) Իրականացնում է մասնագիտական կրթության որակի ապահովումը:

6) գործունեության նպատակներին համապատասխան, իրականացնում է՝ ուսումնական, գիտահետազոտական, խորհրդատվական, փորձագիտական, գիտաարտադրական (նախագծային, տեխնոլոգիական, փորձարարաարտադրական) ծառայություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

IV. Ֆակուլտետի կառավարումը

14. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:

15. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի գիտական խորհուրդը, դեկանատի խորհուրդը և դեկանը:

V. Ֆակուլտետի գիտական խորհուրդը

16. Ֆակուլտետի գիտական խորհուրդը ձևավորվում է ֆակուլտետի աշխատողների և ուսանողության ներկայացուցիչներից: Ֆակուլտետի գիտական խորհրդի թվաքանակը, ցուցակային կազմը հաստատում է համալսարանի ռեկտորը:

17. Ֆակուլտետի աշխատողների կազմից ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ի պաշտոնե և ընտրությամբ:

18. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են՝

1) ֆակուլտետի դեկանը (նախագահ) և նրա տեղակալները,
2) ֆակուլտետի ամբիոնների վարիչները,
3) ֆակուլտետի ուսխորհրդի նախագահը,
4) ռեկտորատի ներկայացուցիչը:

19. Ֆակուլտետի գիտական խորհրդի ընտրովի կազմը ձևավորվում է ֆակուլտետի ամբիոնների, ինչպես նաև համահամալսարանական և այլ ամբիոնների այն փորձառու առաջատար դասախոսներից, որոնք դասավանդում են տվյալ ֆակուլտետում: Թեկնածուներին ընտրությամբ առաջադրում են համապատասխան ամբիոնները: Ամբիոնի աշխատողը կարող է ընդգրկվել միայն մեկ ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում:

20. Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ուսանողական համակազմի ներկայացուցիչները կազմում են խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն 25 տոկոսը:

21. Ֆակուլտետի գիտական խորհրդի առաջադրված կազմը դեկանատի խորհուրդը քննարկում և ներկայացնում է համալսարանի գիտական խորհրդի ընտրությանը:

22. Ֆակուլտետի գիտական խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

23. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ կիսամյակային ժամանակացույցի համաձայն: Անհրաժեշտության դեպքում կարող են գումարվել արտահերթ նիստեր՝ համալսարանի ռեկտորի, ֆակուլտետի դեկանի, խորհրդի անդամների ¼-ի նախաձեռնությամբ և դեկանատի խորհրդի որոշմամբ: Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի մասին առնվազն երկու օր առաջ իրազեկվում են խորհրդի անդամները:

24. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը նախագահում է դեկանը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը: Նիստի օրակարգը կազմում է դեկանը: Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի օրակարգը նախապես քննարկվում է դեկանատի խորհրդում:

25. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում:

26. Ֆակուլտետի գիտական խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ: Թափուր պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների շնորհման թեկնածուների առաջադրման վերաբերյալ որոշումներն ընդունվում են ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ փակ գաղտնի կամ բաց քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Որոշումը ներկայացվում է համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

27. Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումներն ուժի մեջ են մտնում դեկանի կողմից հաստատվելուց հետո: Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի դեկանի, տեղակալների, աշխատողների, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և հայցորդների համար:

28. Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումների մասին իրազեկվում են դասախոսական և ուսանողական համակազմերը, ինչպես նաև ֆակուլտետի այլ աշխատողները: Իրազեկումն իրականացվում է որոշումները համալսարանի համացանցային կայքում տեղադրելու, ինչպես նաև հայտարարությունների համար հարմարեցված տեղում փակցվելու միջոցով:

29. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերը արձանագրվում են, իսկ արձանագրությունները վավերացվում են խորհրդի նախագահի (դեկանի) և քարտուղարի ստորագրություններով: Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստը արձանագրում է քարտուղարը, որը նշանակվում է խորհրդի նախագահի կողմից:

30. Ֆակուլտետի գիտական խորհուրդը՝

1) մշակում և քննարկում է ֆակուլտետի կանոնադրությունն ու այն ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը.

2) ռեկտորին է ներկայացնում առաջարկություններ ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ (լաբորատորիաներ, բաժիններ) և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու և վերակազմակերպելու վերաբերյալ.

3) ռեկտորատ է ներկայացնում ֆակուլտետի մասնագիտությունների ուսումնական պլանները՝ համալսարանի գիտական խորհրդում հաստատելու համար.

4) ռեկտորատին է ներկայացնում ֆակուլտետի աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու առաջարկություններ.

5) սահմանված կարգով քննարկում և Համալսարանի գիտական խորհրդի ընտրությանն է ներկայացնում դեկանի թեկնածուներին,

6) լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը.

7) լուծում է սույն կանոնադրությունից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և այլ գործունեության հետ կապված հարցեր:

31. Ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահը՝

1) Կազմակերպում է ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքները և գումարում նիստերը.

2) Կազմում է նիստի օրակարգը.

3) Հրապարակում և քվեարկության է ներկայացնում նիստի օրակարգը.

4) Ամփոփում է օրակարգի հարցերի քննարկումների արդյունքները.

5) Հաստատում է որոշումները, ստորագրում նիստի արձանագրությունը.

6) Իրականացնում է սույն կանոնակարգով սահմանված այլ լիազորություններ.

32. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի քարտուղարը՝

1) Մինչև նիստը սկսելը կատարում է խորհրդի անդամների գրանցում.

2) Արձանագրում է գիտական խորհրդի նիստերը, ստորագրում արձանագրությունները.

33. Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները.

1) Մասնակցում են նիստերին, օրակարգի հարցերի քննարկմանը, ներկայացնում կարծիքներ և առաջարկություններ քննարկվող հարցերի վերաբերյալ.

2) Հարցեր են ուղղում նիստի նախագահին, օրակարգի հարցերի զեկուցողներին և ելույթ ունեցողներին:

VI. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի ընթացակարգը

34. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը (դեկանը): Նիստի օրակարգը հաստատվում է գիտական խորհրդի անդամների քվեարկությամբ՝

նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Նիստի օրակարգը կարող է քվեարկությամբ լրացվել այլ հարցերով:

35. Օրակարգի ձևավորումից հետո նախագահողը պարզաբանում է օրակարգի հարցերի քննարկման ընթացակարգը: Օրակարգի հարցերը ներկայացնում է (զեկուցում է) նիստի նախագահը կամ տվյալ հարցը նախապատրաստած զեկուցողը:

36. Օրակարգի հարցերի քննարկումն սկսվում է հերթական հարցի զեկուցմամբ: Յուրաքանչյուր հարց զեկուցելուց հետո նիստին մասնակիցները կարող են հարցեր ուղղել զեկուցողին և ելույթ ունեցողին, որից հետո քննարկվող հարցի վերաբերյալ կատարվում է մտքերի փոխանակություն (ելույթներ, առաջարկություններ, դիտողություններ), որով ավարտվում է հարցի քննարկումը:

37. Օրակարգի յուրաքանչյուր հարցի քննարկման համար, որպես կանոն, սահմանվում է հետևյալ աշխատակարգը՝

ա) զեկուցման համար՝ մինչև 15 րոպե,

բ) հարց ու պատասխանի համար՝ մինչև 10 րոպե,

գ) յուրաքանչյուր ելույթի համար՝ մինչև 5 րոպե:

38. Ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ կարող է սահմանվել այլ աշխատակարգ: Աշխատակարգի վերաբերյալ առաջարկությունն ընդունվում է բաց քվեարկությամբ:

39. Զեկուցողին հարցեր կարող են ուղղել ֆակուլտետի գիտական խորհրդի անդամները: Գիտական խորհրդի անդամները կարող են հարցեր ուղղել նաև խորհրդի նախագահին, ինչպես նաև քննարկվող հարցին առնչվող հրավիրված անձանց: Անհրաժեշտության դեպքում նիստի նախագահողը կարող է ելույթի համար ձայն տալ նաև հրավիրվածներին:

40. Յուրաքանչյուր հարցի քննարկումն ավարտվում է նախագահողի եզրափակիչ (ամփոփիչ) ելույթով:

41. Օրակարգի հարցի քննարկման ավարտին հաջորդում է որոշման ընդունումը: Բոլոր որոշումներն ընդունվում են քվեարկությամբ: Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել հարցի քննարկումից անմիջապես հետո կամ բոլոր հարցերի քննարկումից հետո:

42. Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակաշրջանում ընթացիկ հարցերը քննարկվում և լուծվում են դեկանատի խորհրդի կողմից: Դեկանատի խորհուրդը դեկանի ղեկավարությամբ գործող մարմին է:

43. Ֆակուլտետի դեկանատի խորհրդի կազմում ընդգրկվում են դեկանը, տեղակալները, ամբիոնի վարիչները և ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը: Ֆակուլտետի դեկանատի խորհրդի կազմի թվաքանակը որոշում և կազմը հաստատում է համալսարանի ռեկտորը:

44. Ֆակուլտետի դեկանատի խորհուրդը.

1) Սույն կանոնակարգով սահմանված իր լիազորությունների սահմաններում քննարկում է ֆակուլտետի գործունեության վերաբերյալ հարցրեր.

2) Ընդունում է խորհրդատվական բնույթի որոշումներ՝ մասնագիտական կրթության որակի ապահովման, ամբիոնների գործունեության, ուսումնական ծրագրերի կատարման, ուսումնական, գիտահետազոտական, մանկավարժական, ուսումնաօժանդակ, ուսումնական պարապմունքների, ստուգարքների և քննությունների կազմակերպման ու արդյունքների ամփոփման, պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման, սովորողների ուսումնադաստիարակչական, հաճախումների ու կարգապահության ապահովման, իրավունքների պաշտպանության և պարտականությունների կատարման հարցերի վերաբերյալ.

3) Առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի գիտական խորհրդին ֆակուլտետի գործունեությունը բարելավելու, ֆակուլտետի աշխատողներին պատվավոր կոչումների և պարգևատրման ներկայացնելու վերաբերյալ.

4) Քննարկում է համալսարանի կանոնադրությունից և սույն կանոնադրությունից բխող ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

45. Ֆակուլտետի ընթացիկ գործունեությունն իր իրավասությունների սահմաններում և սույն կանոնադրության համաձայն կազմակերպում ու ղեկավարում է ֆակուլտետի դեկանը:

46. Ֆակուլտետի դեկանն ընտրվում է Համալսարանի գիտական խորհրդում՝ փակ (ներբուհական) մրցույթի հիման վրա, փակ գաղտնի քվեարկությամբ: Մրցույթի արդյունքների հիման վրա հաղթողը համալսարանի ռեկտորի հրամանով նշանակվում է

ֆակուլտետի դեկանի պաշտոնում և նրա հետ սահմանված կարգով կնքվում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

47. Ֆակուլտետի դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան երկու 5-ամյա ժամկետ անընդմեջ: Դեկանի թեկնածուի տարիքը չպետք է գերազանցի 65 տարին:

48. Ֆակուլտետի դեկանը՝

1) Կազմակերպում ու ղեկավարում է ֆակուլտետի, ֆակուլտետի գիտական խորհրդի և դեկանատի խորհրդի աշխատանքները,

2) Վերահսկում է ամբիոնների և դրանց ստորաբաժանումների կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունն ու գործընթացները.

3) ապահովում է համալսարանի հոգաբարձուների խորհրդի, ռեկտորի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետի գիտական խորհրդի և դեկանատի խորհրդի որոշումների կատարումը.

4) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների և ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղարի թեկնածությունները,

5) իր իրավասության սահմաններում ընդունում է ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնադրությանը,

6) կազմակերպում և վերահսկում է՝

ա) ուսումնական պարապմունքները, ստուգարքների և քննությունների ընդունումը,

բ) ամբիոնների և դրանց ստորաբաժանումների կրթական, գիտական, արտադրական, միջազգային և այլ գործունեությունն ու աշխատանքները,

գ) պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման և սովորողների ուսումնառության, հաճախումների ու կարգապահության ապահովման աշխատանքները,

7) իրականացնում է մասնագիտական կրթության որակի ապահովումը,

8) վերահսկում է ուսումնական ծրագրերի կատարման ընթացքը,

9) իրականացնում է ուսանողների համակազմի, խմբերի և հոսքերի կազմավորումը, ուսումնական ծանրաբեռնվածության (խմբային տարեկան պլաններ) բաշխումն ու համակարգումը, այդ թվում՝ ուսանողների ինքնուրույն աշխատանքի պլանավորումն ու կազմակերպումը,

10) կազմակերպում է ֆակուլտետի ըստ կուրսերի և խմբերի մասնագիտական ու մասնագիտությունների ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի մշակման, հաստատման և կատարման գործընթացը,

11) վերահսկում է մասնագիտական և այլ առարկաների դասավանդման որակը, մասնագիտական ամբիոնների, ակադեմիական խմբերի ավագների աշխատանքը,

12) կազմակերպում է ֆակուլտետի ուսումնամեթոդական, մանկավարժական, գիտական աշխատանքները՝ ըստ սահմանված չափորոշիչների,

13) ապահովում է ուսանողների մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին,

14) ապահովում է ֆակուլտետի, ֆակուլտետի գիտական խորհրդի, դեկանատի խորհրդի, մասնագիտական ամբիոնների բնականոն գործունեությունը, կրթության և գիտության զարգացման գործընթացների արդյունավետությունը,

15) ապահովում է ուսանողների իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման բարենպաստ պայմաններ և ուսանողի հետ կապը: Ուսանողներին ծանոթացնում է համալսարանի ներքին կարգապահական և այլ կանոններին, լուծում է ուսանողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ խնդիրներ,

16) իր իրավասության սահմաններում ֆակուլտետի, ամբիոնների և դրանց ստորաբաժանումների ղեկավարներին և աշխատողներին տալիս է կարգադրություններ, ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

17) կազմակերպում և վերահսկում է սովորողների ուսման վարձի հավաքագրումը սահմանված ժամկետներում,

18) Համալսարանի ռեկտորի պատվիրակած լիազորությունների շրջանակում ինքնուրույն և անձնական պատասխանատվությամբ լուծում է բարձրագույն մասնագիտական կրթության իրականացման գործառույթներին առնչվող հիմնախնդիրները,

19) համակարգում է մասնագիտական ամբիոնների գործունեությունը,

20) համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ֆակուլտետի և դրա ստորաբաժանումների գործունեության կատարելագործման, մասնագիտական

ամբիոնների մասնագետների ընտրության, նշանակման, ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, հեռացնելու, վերականգնելու, կրթության որակը բարելավելու վերաբերյալ,

21) իր իրավասության շրջանակներում առաջարկություն է ներկայացնում համալսարանի ռեկտորին կարգապահական կանոնները խախտելու համար ֆակուլտետի աշխատողների և սովորողների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ:

49. Ֆակուլտետի դեկանի գործունեությունը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:

50. Ֆակուլտետի դեկանն ազատվում է աշխատանքից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

51. Ֆակուլտետի դեկանն ունի տեղակալներ՝

1) կրթական ծրագրի կատարման, մասնագիտական կրթության որակի ապահովման և ուսումնամեթոդական աշխատանքների գծով,

2) ուսումնադաստիարակչական և տեղեկատվության ապահովման ու կառավարման գծով:

3) Դեկանի տեղակալները դեկանի հանձնարարությամբ կատարում են նաև ֆակուլտետի գործունեության սույն կանոնակարգով սահմանված գործառույթները:

V. Դեկանի իրավունքներն ու պարտականությունները

52. Դեկանն իրավունք ունի.

1) մասնակցել Համալսարանի գործունեությանը վերաբերող հարցերի քննարկմանը և լուծմանը, պետական ավարտական քննություններին, գիտական խորհրդի ու ռեկտորատի նիստերին և ներկայացնել առաջարկություններ, եզրակացություններ ու կարծիքներ հայտնել,

2) օգտվել Համալսարանի գրադարանների, տեղեկատվական պահոցների, Համալսարանի կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների ծառայություններից, դրանց ղեկավարներից պահանջել տեղեկատվություններ՝ Համալսարանի կանոնադրությանը համապատասխան,

3) Համալսարանի կառավարման մարմիններից պահանջել անհրաժեշտ կազմակերպական և նյութատեխնիկական պայմաններ պաշտոնական պարտականությունների կատարման համար,

4) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

53. Դեկանը պարտավոր է.

1) սույն կանոնակարգով սահմանված գործառույթները, աշխատանքային պարտականությունները և գործատուի հանձնարարությունները կատարել բարեխղճորեն և անվերապահորեն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության, ներքին կարգապահական կանոնների, Համալսարանի այլ ակտերի պահանջներին համապատասխան:

2) իր գործունեությամբ նպաստել բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը,

3) Համալսարանի ռեկտորի պահանջով զեկուցել և հաշվետվություններ ներկայացնել իրեն հանձնարարված աշխատանքների կատարման ընթացքի և վիճակի մասին,

4) պահպանել աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի և հակահրդեհային պաշտպանության ապահովման կանոնները,

5) ապահովել կրթական ու գիտական գործընթացների արդյունավետությունը,

6) աշխատանքային պարտականությունները կատարելու համար իր ժամանակավոր տիրապետմանը հանձնված գույքն ու արժեքներն օգտագործել խնամքով: Աշխատանքային գործունեությունը դադարեցնելու դեպքում կամ ցանկացած այլ պահի Համալսարանի պահանջով դրանք ամբողջությամբ վերադարձնել: Համալսարանի գույքի պաշտպանությանն սպասվող վտանգի ծագման դեպքում միջոցներ ձեռնարկել վտանգը կանխելու համար և այդ մասին անմիջապես տեղեկացնել Համալսարանի ռեկտորին,

7) աշխատանքային օրվա ընթացքում աշխատաժամանակն օգտագործել աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման համար,

8) գործընկերների և ուսանողների նկատմամբ դրսևորել անկողմնակալ, ուշադիր և հարգալից վերաբերմունք,

9) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված պարտականությունները կատարել անձամբ:

54. Կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Համալսարանի կանոնադրությամբ և ներքին կանոններով սահմանված այլ պարտականություններ:

55. Դեկանը պատասխանատվություն է կրում սույն կանոնակարգով նախատեսված պաշտոնական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև Համալսարանի գույքին վնաս պատճառելու համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

VI. Եզրափակիչ դրույթներ

56. Սույն կանոնադրությունը հաստատվում, փոփոխվում կամ լրացվում է Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ:

57. Սույն կանոնադրությունը, դրա փոփոխությունները և լրացումներն ուժի մեջ են մտնում Համալսարանի գիտական խորհրդի որոշումը համալսարանի ռեկտորի կողմից հաստատվելուց հետո՝ տասներորդ օրը:

58. Այն բոլոր հարցերը, որոնք ներառված չեն սույն կանոնադրությունում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով և Համալսարանի կանոնադրությամբ:

59. Սույն կանոնադրությունն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցված է ճանաչվում համալսարանի գիտական խորհրդի 04.04.2013թ. որոշմամբ հաստատված «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի ֆակուլտետի» կանոնակարգը:

Գիտական քարտուղար՝ **Լ. Հ. Լևոնյան**

23 հոկտեմբերի 2014թ.

գիտխորհրդի որոշում № 01-10/14